Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

2021թ. հոկտեմբերի 4-6-ը Ռուսաստանի Դաշնություն կատարած գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը՝

Նարեկ Տերյան

2. Զբաղեցրած պաշտոնը՝

ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ

3. Գործուղման վայրը և ժամկետները՝

Ռուսաստանի Դաշնություն, ք. Մոսկվա, 2021թ. հոկտեմբերի 4-ից 6-ը

4. Հրավիրող կողմը՝

«ԱԼՌՈՍԱ» Բաց բաժնետիրական ընկերություն

5. Գործուղման նպատակը՝

«ԱԼՌՈՍԱ» ԲԲԸ-ի և Ռուսաստանի Գոխրանի ղեկավար կազմերի հետ ալմաստային հումքի ձեռքբերման մեխանիզմների քննարկում

6. Քննարկված թեմաները՝

«ԱԼՌՈՍԱ» ԲԲԸ-ի հետ համագործակցության ընդլայնման հնարավորությունները

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Այցի շրջանակներում կազմակերպվել է հանդիպում «ԱԼՌՈՍԱ» ԲԲԸ-ի գլխավոր տնօրենի տեղակալ - «Միասնական վաճառքի կազմակերպություն» մասնաճյուղի տնօրեն Եվգենի Ագուրեևի, միջազգային համագործակցության վարչության պետ Պյոտր Կարակչիևի և ընկերության այլ պաշտոնյաների հետ: Քննարկվել է «ԱԼՌՈՍԱ» ընկերությունից ալմաստային հումքի ձեռքբերման հետ կապված համագործակցության նպատակով հայկական կողմից առաջարկվող ձևաչափը, որն արժանացել է ռուս գործընկերների հավանությանը:

Պայմանավորվածություն է ձեռք բերվել կարճ ժամանակահատվածում կազմել համատեղ գործողությունների ճանապարհային քարտեզ՝ հետագա համագործակցությանն իրավական հիմքի վրա հիմնված ընթացք տալու նպատակով:

Բացի այդ, ՌԴ այցի շրջանակներում կայացել են հետևյալ հանդիպումները.

Ռուսաստանի Գոխրանի ղեկավար Անդրեյ Յուրինի հետ հանդիպման ընթացքում քննարկվել են ալմաստային հումքի ձեռքբերման համար բարենպաստ պայմանները, մասնավորապես՝ հայկական ընկերությունների հետ կնքվող պայմանագրերից ապահովադիր վճարի պահանջի չեղարկման վերաբերյալ հայկական կողմի մոտեցումները և համապատասխան հիմնավորումները: Ռուսական կողմը խոստացավ ուսումնասիրել այդ առաջարկությունները և քննարկել ՌԴ ֆինանսների նախարարության հետ: Այդ նպատակով առաջիկայում նախատեսվում է հանդիպում ՌԴ ֆինանսների նախարարի տեղակալ Ալեքսեյ Մոիսեևի հետ՝ հարցին վերջնական լուծում տալու համար:

Այցի շրջանակներում կայացել է նաև հանդիպում «ՌՈՒՑՈԳ-ԻՆՎԵՍՏ» հոլդինգի նախագահ Ռուբեն Գրիգորյանի հետ: Քննարկվել է այդ հոլդինգի հայաստանյան ներկայացուցիչ «Ռիդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած ք. Արագածում լեռնադահուկային հանգստավայրի կառուցման ներդրումային ծրագիրը և վերջինիս իրականացման հետագա քայլերը: Արդյունքում ձեռք է բերվել պայմանավորվածություն ստեղծել համատեղ ճանապարհային քարտեզ՝ ներդրումային ծրագրի հետագա ընթացքն ապահովելու համար:

Կայացել է նաև հանդիպում՝ «Ռուսական արտահանման կենտրոն» ԲԸ-ի համագումարային-ցուցահանդեսային միջոցառումների և գործարար առաքելության գծով կառավարիչ-տնօրեն Տատյանա Անի, արտասահմանյան ցանցերի զարգացման տնօրեն Դմիտրի Պրոխորենկոյի և արտասահմանյան ցանցերի զարգացման վարչության պետ Ելիզավետա Զինովևայի հետ: Քննարկվել է 2021թ. հոկտեմբերի 20-ից 22-ը ՌԴ գործարար առաքելության ՀՀ ծրագրված այցի կազմակերպչական աշխատանքների հետ կապված հարցերը:

Կայացել է հանդիպում «ԳեոՊրոՄայնինգ» ընկերության գլխավոր տնօրեն, տնօրենների խորհդրի անդամ Ռոման Խուդոլիի հետ, որի ժամանակ քննարկվել են հանքարդյունաբերության ոլորտի զարգացմանն ուղղված հարցեր: Պայմանավորվածություն է ձեռք բերվել շարունակել բանակցությունները՝ ՀՀ-ում պղնձաձուլարան ստեղծելու ուղղությամբ փոխգործակցության մեխանիզմները հստակեցնելու և գործնական իրագործման փուլին անցնելու նպատակով:

Այցի շրջանակներում կազմակերպվել է հանդիպում հարավկորեական «Կոտրա» կազմակերպության գլխավոր տնօրենի տեղակալ Կիմ Խամինի, տնօրենի տեղակալ Պակ Գոնվոնի և մենեջեր Նարե Շինի հետ: Քննարկվել են Հայաստանի Հանրապետության և Հարավային Կորեայի միջև տնտեսական հարաբերություններն ընդլայնելու և զարգացնելու հետ կապված հարցերը: Կողմերն անդրադարձել են նաև ՀՀ-ում հարավկորեական ընկերությունների ներդրումային հնարարավորություններին: Քննարկման արդյունքում ձեռք է բերվել պայմանավորվածություն 2021թ. դեկտեմբեր ամսին կազմակերպել ՀՀ այց հարավկորեական ընկերությունների համար:

8. Ստորագրությունը, ամսաթիվը՝

07.10.2021թ.

10/7/2021

X

ԱՐՏՅՈՄԻ ՆԱՐԵԿ

Signed by: TERYAN NAREK 2103870832